

Կարողութիւն
 Կը հրաժարի 1808
 Փերտինանտոս Լ, Թագաւոր հրատա-
 րակեալ 1808ին և զրեթէ իսկոյն հրաժա-
 րելու ստիպեալ :
 Յովսէփ Պոնարայի . . . 1808-1813

Փերտինանտոս Լ, զարձեալ
 աթոռը կ'ելլէ 1813-1833
 Իզապելլա Բ . 1833 . կ'ամուսնանայ
 1846ին մօրաքեռորդույն Տոն Ֆրանսուայի
 հետ . Կը ստիպուի գահէն հեռանալու
 1868ին .

Ի ԾՆՈՒՆԴ ՏԵՍՈՒՆ

Որպէս խարակ ի ծագաց
 Բարձու լերին առապար
 Անկեալ թափով դըղըրդման
 Թաւալազըր սըրաւար ,
 Դ' ոլորտապտոյտ ափափայտ
 Ճախր ի հովիտըն յորայտ
 Առեալ՝ մըխի եւ մընայ .

Անդ ուր անկաւն անյարիր
 Կայ ծանրաբեռն յիւր կուտակ .
 Եւ ոչ դարուց ի շըրջել
 Ի վաղեմին անդր ի ծագ
 Տեսանէ զակն արեւու ,
 Թէ գօրութիւն ձեռնատու
 Ոչ վերառնուլ զինք ջանայ .

Սապէս անկեալ որդին հէք
 Կայր յանցանացն առաջին ,
 Յօրէ յորմէ խոստացեալ
 Յասումն անճառ , դառնագին
 Արկ զինքն յաղէտըս ցաւոց ,
 Ուստ զիւրըն խրոխտ պարանոց
 Չմարթէր այլ եւրս կանգնել :

Ո՛վ յատելի ծընելեաց ,
 Ո՛վ ոք ուրեք էր կարող
 Ասել առ Սուրբըն սըրբոց
 Յանմատչելին՝ Ներեա , թող .
 Կըռել նոր դաշն յաւիտեան ,
 Եւ զգըծոխոց յաղթական
 Առնուլ զաւարն և կորզել :

Ահա Մանուկ մեզ ծընաւ
 Ահա տըւաւ մեզ Որդի .
 Դողան ոսոխ զօրութիւնք
 Շարժման յունիցն առ ահի .

Նա զձեռն առ մարդ կարկառէ ,
 Որ ողջացեալ և յառնէ
 Քան ըզնախկին փառաւոր :

Յեթերական կայենից
 Բըղխէ աղբիւր վայրիջեալ
 Ընդ ապալերըս փըշոց
 Կենդանացայտ ծաւալեալ .
 Կողերք ըզմեղըր ծորեն
 Եւ տատասկաց փոխարէն
 Փըթթի ծաղիկ անդանօր :

Ո՛վ Դու Որդի էակից
 Մըշտընջենին , միշտ իւրեւ ,
 Ո՛ր դար կարէ քեզ ասել
 Ըսկիզբն եղիւ քո ինեւ .
 Որ եսդ յերկնից լայնասփիւ
 Անպարագիծ դու ի ծիր ,
 Չոր բանք քոյին ըստեղծին .

Եւ Դու զգենուլ յանձն առեր
 Հողազանդուած զայս մարմին .
 Ձինչ արժանիք , որ չընորհ
 Յայսքան պատիւ զնա հանին .
 Թէ ի խորհուրդս իւր թաքուն
 Յաղթող գտանի թողութիւն ,
 Անհուն է յոյժ գութ Նորին :

Ծընաւ Նա՛ յսօր . յեփրաթա
 Ի նըկատեալ անդ տեղին
 Կոյս ոք վեհազն եւ գընաց
 Իսրայելի փառք տոհմին ,
 Բըղի որդւով այնպիսեաւ .
 'Ստ իւրոց խոստմանց Նա ծընաւ
 Երբմէ սպասեալն էր՝ եկաց :

ՁԱՍՏՈՒԼԱԾՈՐԴԻՆ մայրն անճառ
Պատեաց ի կտաւըս գըձուձ,
Եւ ի մըսուրն աղքատին
Մեղմագորով եղ հանգոյց .
Եւ, երանի, գետնամած
Երկիր եպագ առ Աստուած՝
Զոր սուրբ արգանդ իւր եբաց :

Հրեշտակ յերկնից առ մարդիկ
Աւետաւոր բաստիս այս ,
Ոչ հրգօրաց սաւառնի
Պահպանական անդր ի կայս .
Այլ յերկիւղած մէջ հովուաց ,
Խիստ աշխարհի անգիտաց ,
Լուսապայծառ երեւի :

Զորով ընդ ցայգըն ծաւալ
Երամովին շուրջ գալով
Բիւր գունդը զուարթնոց փարեցան
Հրացայտ թեզքն յածելով .
Եւ վառ յեռանդն հեշտային
Փառս առ Աստուած երգեցին
Որպէս յերկինս անդ երգի :

Կըրկնեցին զերգն հըրճուական
Դարձ արարեալ ի բարձունս .
Ընդ անցեալ ամպսըն փեռեկ
Վերհամբարձաւ եւ յանհունս
Զայնն հեռացաւ սըրբանուէր ,

Մինչ զի ոչ եւս այլ լըսէր
Դասակ հովուացն երջանիկ :

Փութանակի ի խընդիր
Օթեւանին այն հիքի
Ելին նոքա եւ տեսին
' Ստ ասացելոյն օրինի .
Խանձարրապատ անդ տեսին
Տաղաւարեալ ի մըսին
Ճըչել զերկնիցն արքայիկ :

Նընջեա՛ Որդեակ , եւ մի՛ լար ,
Նընջեա՛ Զաւակդ երկնաւոր .
Ոչ իշխեսցեն ըզգըլտովդ
Շաչել մըրրիկը ահաւոր .
Կազմք յամբարիշտ ի յերկրի ,
Հանգոյն ձիոց ի մարտի ,
Վազել քոյին յանդիման :

Նընջեա՛ ո՛վ Դու երկնային .
Ազգք եւ ազինք ոչ գիտեն
Ո՛վ ոք ծընաւ . այլ ընդ փոյթ
Վեհ ըստացուած քո իցեն .
Եւ զթագաւոր իմասցին
Անդ ի խոնարհ հանգըստին
Եւ ընդ հողով ծածկութեան :

Ա. ՄԱՆՑՈՒՒ .

ԹԱՐԳՄ. Հ. Դ. ՆԱԶԱՐԵԹԵԱՆ